ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Ավագանու նիստերի և համայնքային նշանակության այլ միջոցառումների (ՏԻՄ-երի ասուլիսներ, հանրային քննարկումներ) առցանց հեռարձակումների վերաբերյալ

Հ/Հ	Համայնք	Միջոցառումը	Օրը	Ժամը	Վայրը
1	Սպիտակ	Սպիտակ համայնքի ավագանու արտահերթ նիստ	06.08.2026թ.	15:00	Սպիտակի համայնքապետարանի նիստերի դահլիճում ք. Սպիտակ, Շահումյան 7

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Կատարող՝ Ա. Ֆրանգյան
Հեռ 0255-2-25-00

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ- Ա
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 6-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2026 թվականի օգոստոսի 6-ի արտահերթ նիստի օրակարգը.

1)Սպիտակ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 145-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

/Զեկուցող՝ Լ. Օհանյան/

2)Սպիտակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին

/Զեկուցող՝ Լ. Օհանյան/

3)Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի 2027-2029 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին

/Զեկուցող՝ Լ. Օհանյան/

4)«ՍՊԻՏԱԿ ՏՐԱՆՍ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ լրացում կատարելու մասին

/Զեկուցող՝ Ա.Ֆրանգյան/

5)Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2026 թվականի մարտի 5-ի թիվ 58-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

/Զեկուցող՝ Ա.Ֆրանգյան/

6)Սպիտակ համայնքի ավագանու 2026 թվականի հուլիսի 7-ի թիվ 118-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին

/Զեկուցող՝ Ա.Ֆրանգյան/

7) «Սպիտակի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը ավլող, փոշեկուլ մեքենա ամրացնելու մասին

/Զեկուցող՝ Ա.Ֆրանգյան/

8)Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2025 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 126-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

/Զեկուցող՝ Ա.Ֆրանգյան/

9)Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 98-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

/Զեկուցող՝ Ա.Ֆրանգյան/

10)«ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎՏՈՊԱՐԿ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը տրակտոր ամրացնելու մասին

/Զեկուցող՝ Ե. Գրիգորյան /

11)«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ բաժնետիրական ընկերությանն անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելուն համաձայնություն տալու մասին

/Զեկուցող՝ Ե. Գրիգորյան /

12)ՀՀ Լոռու մարզի Ջրաշեն բնակավայրում հեղուկ վառելիքի լցման կայանի կառուցման աշխատանքների իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին

/Զեկուցող՝ Ե. Գրիգորյան /

13)«ՇԵՆ 77» ոչ առևտրային սպառողական կոոպերատիվին անհատույց օգտագործման իրավունքով անշարժ գույք տրամադրելուն համաձայնություն տալու մասին

/Զեկուցող՝ Ե. Գրիգորյան /

14)Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

/Զեկուցող՝ Ե. Գրիգորյան /

15)Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0244-0014 կադաստրային ծածկագրով 0,18531 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին

/Զեկուցող՝ Ե. Գրիգորյան /